ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2013- 14.03/
14.03.2013 թ.

ՀՀ Վարչական դատարան

Դիմումատու՝
«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի
Վանաձորի գրասենյակ» ՀԿ
Պետական ռեգիստրի վկայական
03 Ա 0704086
ՀՀ Լոռու մարզ, ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 59

Պատասխանող՝ ՀՀ ոստիկանության պետ

Վ. Գասպարյան
ք. Երևան, Նալբանդյան 130

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄ

(ՀՀ ոստիկանության աշխատակիցների գործողությունները
ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին)

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը 2013 թվականի փետրվարի 18-ի նախագահական ընտրությունների ժամանակ թվով 75 դիտարդների միջոցով իրականացրել է ընտրական տեղամասերում և ընտրական տեղամասերի շրջակայքերում դիտորդական առաքելություն:

Դիտորդադական առաքելության ընթացքում դիտորդների կողմից արձանագրված և քաղաքացիներից ահազանգերի միջոցով ստացված թվով 61 խախտումների վերաբերյալ տեղեկությունները ՀՀ ոստիկանություն է ներկայացվել 4 ժամը մեկ:

2013թ. փետրվարի 18-ին կազմակերպության Ե/2013-18.02/98 գրությամբ ՀՀ ոստիկանության պետին է ներկայացրել քվեարության օրը ժամը 08:00-ից մինչև 12:00-ն ընկած ժամանակահատվածում կազմակերպության դիտորդների կողմից Վանաձոր, Տաշիր, Սպիտակ, Իջևան քաղաքների և շրջակա գյուղերի ընտրատեղամասերում արձանագրված և քաղաքացիների կողմից ահազանգերի միջոցով ստացված թվով 30 խախտումների վերաբերյալ տեղեկություններ, որոնցից 10-ը վարչական բնույթի են եղել իսկ 20-ը՝ քրեական: վերաբերյալ /փաստաթուղտ 1/:

Քվերակության օրը՝ 2013թ. փետրվարի 18-ին կազմակերպությունը թիվ Ե/2013-18.02/99 գրությամբ ՀՀ ոստիկանության պետին է ներկայացրել քվեարկության օրը ժամը 12:00-ից մինչև 16:00-ն ընկած ժամանակահատվածում կազմակերպության դիտորդների կողմից Վանաձոր, Տաշիր, Սպիտակ, Իջևան քաղաքների և շրջակա գյուղերի ընտրատեղամասերում արձանագրած և

քաղաքացիների կողմից ահազանգերի միջոցով ստացած 15 խախտումների վերաբերյալ տեղեկություններ, որոնցից 8-ը եղել են վարչական իսկ 7-ը քրեական բնույթի խախտումներ: /փաստաթուղթ 2/:

2013 թ. փետրվարի 18-ին կազմակերպության Ե/2013-18.02/101 գրությամբ ՀՀ ոստիկանության պետին է ներկայացրել կազմակերպության դիտորդների կողմից ժամը 16:00-ից մինչև 20:00-ն ընկած ժամանակահատվածում Վանաձոր, Տաշիր, Սպիտակ, Իջևան քաղաքների և շրջակա գյուղերի ընտրատեղամասերում արձանագրված և քաղաքացիների կողմից ահազանգերի միջոցով ստացված թվով 16 խախտումների վերաբերյալ տեղեկություններ, որոնցից 8-ը եղել են վարչական իսկ 8-ը քրեական բնույթի խախտումներ /փաստաթուղթ 3/:

Կազմակերպության կողմից արձանագրված և ՀՀ ոստիկանություն ներկայացված 2013 թ. փետրվարի 18-ի նախագահական ընտրությունների ընթացքում կատարվող /շարունակվող/ խախտումները ենթակա են եղել ոստիկանության աշխատակիցների կողմից **ապահովել հանցագործությունների ու վարչական իրավախախտումների կանխումը և խափանումը, հասարակական կարգի պահպանությունը և հասարակական անվտանգությունը,** որը նրանց կողմից չի իրականացվել**:**

Գտնում եմ, որ 2013 թ. փետրվարի 18-ի նախագահական ընտրությունների ընթացքում ՀՀ ոստիկանության գործողությունները (անգործությունը) ոչ իրավաչափ են՝ հետևյալ պատճառաբանությամբ և հիմնավորմամբ.

«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ոստիկանության խնդիրներն են օրենքին համապատասխան ապահովել՝

1) մարդու անվտանգությունը՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում.

2) հանցագործությունների ու վարչական իրավախախտումների նախականխումը, կանխումը և խափանումը.

3) հանցագործությունների հայտնաբերումը և բացահայտումը, քրեական գործով նախնական քննությունը.

4) հասարակական կարգի պահպանությունը և հասարակական անվտանգությունը.

«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ոստիկանությունը օրենքով սահմանված կարգով և դեպքերում պարտավոր է պաշտպանել մարդու կյանքը, առողջությունը, պատիվը, արժանապատվությունը, իրավունքները, ազատություններն ու օրինական շահերը հանցավոր և այլ ոտնձգությունից:

«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ոստիկանությունը օրենքով սահմանված կարգով և դեպքերում պարտավոր է կանխել և խափանել հանցագործություններն ու այլ իրավախախտումները, բերման ենթարկել հանցանք կամ վարույթ պահանջող այլ իրավախախտում կատարած անձանց, պարզել հանցագործություններ և այլ իրավախախտումներ ծնող պատճառներն ու դրանց նպաստող պայմանները, ձեռնարկել համապատասխան միջոցներ դրանք վերացնելու ուղղությամբ:

«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ ոստիկանությունը պարտավոր է ապահովել հասարակական կարգի պահպանությունը փողոցներում, հրապարակներում, զբոսայգիներում և երկաթուղային կայարաններում, օդանավակայաններում,

ընտրական տեղամասերում, այլ հասարակական վայրերում, դատական նիստերի ընթացքում (դատարանների միջնորդությամբ):

«ՀՀ ընտրական» օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն՝ ոստիկանության կենտրոնական և տարածքային մարմինները, դրանց ծառայություններն ու ստորաբաժանումները **պարտավոր են ապահովել ընտրությունների անցկացման բնականոն ընթացքը, ընտրական հանձնաժողովների ու դրանց անդամների անկաշկանդ գործունեությունը:** Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը ընտրությունների հետ կապված միջոցառումներում ապահովում է պատշաճ կարգ ու կանոն, հանձնաժողովի նախագահի պահանջով աջակցում հանձնաժողովներին, ապահովում է ընտրական փաստաթղթերի անվտանգ տեղափոխումն ու դրանց պահպանումն ընտրական հանձնաժողովներում:

Վերոգրյալ նորմերի համադրությունից հետևում է, որ 2013 թվականի փետրվարի 18-ի նախագահական ընտրությունների ընթացքում ՀՀ ոստիկանության աշխատակիցներն ունեցել են մի շարք պարտականություններ, որոնք չեն կատարել, ինչն էլ իր հերթին հանգեցրել է նրան, որ ՀՀ նախագահական ընտրությունների ընթացքում կատարվել են մի շարք ընտրական խախտումներ, որոնք ՀՀ ոստիկանության աշխատակիցների անգործության հետևանքով չեն բացահայտվել:

ՀՀ ոստիկանության աշխատակիցների ոչ իրավաչափ գործողությունների (անգործության) փաստը հիմնավորվում է կազմակերպության կողմից ՀՀ ոստիկանություն ներկայացրած խախտումների վերաբերյալ արձագանքներով, կազմակերպությունը թիվ Ե/2013-18.02/98 (ժամը 12:00), Ե/2013-18.02/99 (ժամը 16:00), Ե/2013-18.02/101 (ժամը 18:00) գրությունները ներկայացրել է ՀՀ ոստիկանության պետի 2013թ. փետրվարի 18-ին: Ներկայացած գրությունների վերաբերյալ տվյալ պահին կանխարգելիչ միջոցառումներ ՀՀ ոստիկանության կողմից չի իրականացվել փոխարենը 2013 թ. փետրվարի 19-ից սկսած ՀՀ ոստիկանությունը զբաղված է եղել անիմաստ գրագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

- 2013թ. փետրվարի 19-ին ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Իջևանի բաժնից ստացվել է թվով 12 գրություն նույն բովանդակությամբ, ըստ որոնց ոստիկանությունից պահանջել է տրամադրել հրապարակված խախտումների համար հիմք հանդիսացող նյութերը, ոստիկանությունում նախապատրաստվող նյութերի վերջնական ընթացքը լուծելու համար:
- 2013թ. փետրվարի 20-ին ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Գուգարքի բաժանից ստացվել է 3 նույնաբովանդակ գրություն, որոնցով ոստիկանությունը պահանջվել է տրամադրել հրապարակված խախտումների համար հիմք հանդիսացող նյութերը, ոստիկանությունում նախապատրաստվող նյութերի վերջնական ընթացքը լուծելու համար:
- 2013թ. փետրվարի 20-ին ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձորի բաժնից ստացվել է 10 նույնաբովանդակ գրություն, որոնցով պահանջվել է տրամադրել հրապարակված խախտումների համար հիմք հանդիսացող նյութերը, ոստիկանությունում նախապատրաստվող նյութերի վերջնական ընթացքը լուծելու համար:

Ավելին ՀՀ ոստիկանության պաշտոնական կայքէջում զետեղված 2013թ. փետրվարի 20-ի «Աշխատանքային խորհրդակցություն ՀՀ ոստիկանությունում» վերնագրով նյութում նշված է, « (.....):

ՀՀ ոստիկանության պետն անդրադարձավ ՀՀ նախագահական ընտրությունների բնականոն ընթացքն ապահովելու և պատշաճ հասարակական կարգ պահպանելու ուղղությամբ ոստիկանության համապատասխան ստորաբաժանումների կողմից իրականացված աշխատանքին, ապա խորհրդակցության մասնակիցների ուշադրությունը հրավիրեց հետընտրական շրջանում հասարակական կարգի պահպանման առանձնահատկություններին և պահանջեց բոլոր իրավիճակներում առաջնորդվել օրենքի գերակայության սկզբունքով: Ոստիկանության պետը, միևնույն ժամանակ, ընդգծեց քարոզարշավի ընթացքում և ընտրությունների օրը արձանագրված իրավախախտումների արագ ու լիարժեք քննության անհրաժեշտությունը: (.....):

Ոստիկանության պետն անդրադառնալով արտաքին ծառայության խնդիրներին՝ կրկին ընդգծեց այդ ոլորտում իրականացվող աշխատանքի գլխավոր սկզբունքները:

Վլադիմիր Գասպարյանը ստորաբաժանումների ղեկավարներից պահանջեց ուսումնասիրել ընտրատեղամասերում կատարված տեսագրությունները և ըստ արդյունքների կարգապահական տույժի ենթարկել իրենց ծառայությունը ոչ պատշաճ կատարած ոստիկաններին, իսկ հանցակազմի առկայության դեպքում դնել նաև քրեական պատասխանատվության հարցը: Այս համատեքստում անհրաժեշտ է ուսումնասիրել նաև զանգվածային լրատվության միջոցներում տեղ գտած բոլոր հաղորդումներն ու ահազանգերը, կատարել պատշաճ քննություն և հասարակությանը ներկայացնել օրինախախտ ոստիկաններին:

Վլադիմիր Գասպարյանը հանձնարարեց օրինահարգություն պահանջել նաև հանրային հավաքների մասնակիցներից՝ կազմակերպիչներին բացատրելով օրինականության պահպանման անհրաժեշտությունը: Դրան ոստիկանությունը կարող է հասնել բացառապես վերքաղաքական, վերկուսակցական, վերանձնային սկզբունքայնությամբ և հանրության հավանությանն արժանացած գործելակերպով: (.....):

Խորհրդակցության ավարտին Վլադիմիր Գասպարյանն ընդգծեց, որ չնայած ծանրաբեռնվածությանը՝ ոստիկանության ստորաբաժանումները պարտավոր են լիարժեք իրականացնել իրենց գլխավոր գործառույթը՝ պայքար հանցավորության դեմ, հանցագործությունների կանխարգելում և բացահայտում, հասարակական կարգի պահպանում»:

2013թ. փետրվարի 27-ի «ՀՀ ոստիկանությունը տեղեկացնում է» վերնագրով նյութում նշված է, ՀՀ ոստիկանության պետ Վլադիմիր Գասպարյանի հանձնարարությամբ՝ փետրվարի 26-ին Արտաշատ քաղաքում անցկացված հանրահավաքի ժամանակ տեղի ունեցած միջադեպի կապակցությամբ նշանակվել է ծառայողական քննություն: (.....):

ՀՀ ոտիկանությունը ափսոսանք է հայտնում Արտաշատում տեղի ունեցած միջադեպի կապակցությամբ և հավաստիացնում, որ այսուհետ էլ շարունակելու է պատշաճ կերպով իրականացնել իր գործառույթները՝ հասարակական կարգուկանոնի ապահովման, քաղաքացիների իրավունքների պահպանման, փոխըմբռնման և հանդուժողականության մթնոլորտի ամրապնդման ուղղությամբ:

2013 թ. փետրվարի 18-ի նախագահական ընտրությունների ընթացքում ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները, ՀՀ ոստիկանությունը և ՀՀ դատախազությունը ստացել են բազմաթիվ դիմում-բողոքներ, որոնք

վերաբերել են մի շարք խախտումների: Այս բողոքների գերակշռող մեծամասնության վերաբերյալ մերժման որոշում է կայացվել՝ դրանք անհիմն համարելու պատճառաբանությամբ: Սակայն ակնհայտ է, որ դիմում-բողոքների այս մեծաքանակությունը և ըստ էության նույնանման լինելը ինքնին խոսում է դրանցում ներկայացված խատումների համատարածության մասին և տարբեր տեղամասերից նույնատիպ խախտումների մասին ներկայացնող նույնատիպ բազմաթիվ բողոքների առկայությունը կազմակերպված ապատեղեկատվություն համարելն ուղղակի անհեթեթ է և չի կարող համապատասխանել իրականությանը: Ավելին, այս խնդիրների գերակշռող մեծամասնության հապճեպ, անհարկի և անհիմն ժխտումը պատկան մարմինների կողմից, նրանց կանխամտածված անգործության և կանխակալ վերաբերմունքի հստակ ապացույց է հանդիսանում:

Վկայակոչված փաստերը ցույց են տալիս, որ ՀՀ ոստիկանությունը միտումնավոր է ցուցաբերել անգործություն, որի հիման վրա դատական կարգով պետք է ճանաչվի 2013 թվականի փետրվարի 18-ի նախագահական ընտրությունների ժամանակ ՀՀ ոստիկանության աշխատակիցների ոչ իրավաչափ գործողությունների (անգործության) փաստը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ճանաչելու որևէ իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը, եթե նա չի կարող հայց ներկայացնել սույն օրենսգրքի 65-67-րդ հոդվածներին համապատասխան:Սույն գործով պաշտոնատար անձանց կողմից իրականացված վարչարարության արդյունքում ընդունված չէ գրավոր վարչական ակտ, այլ՝ կատարված են գործողություններ, իսկ Վարչական մարմինների գործողությունների դեմ հայցատեսակը նախատեսված է ՀՀ «Վարչական դատավարության» օրենսգրքի 68-րդ հոդվածով (տես՝ Վճռաբեկ դատարանի 03.12.2010 Վարչական գործ թիվ ՎԴ/0277/05/09 2010թ որոշումը): Պաշտոնատար անձանց կողմից իրականացրած գործողությունները դրանք ավարտվելու պահից դադարել են իրավաբանական ուժ ունենալուց:

«Վարչական դատավարության» օրենսգրքի 68-րդ հոդվածով նախատեսված հայցատեսակների համար, նույն օրենսգրքի 71-րդ հոդվածով ժամկետային սահմանափակում նախատեսված չէ:

Եթե դատարանը, սույն հայցի վարույթ ընդունելու փուլում, այնուամենայնիվ գտնի, որ կազմակերպության իրավունքները ավելի արդյունավետ պաշտպանելու և վերականգնելու նպատակով սույն հայցատեսակը սխալ է ընտրված, ապա դատարանը բոլոր դեպքերում պարտավոր է վարույթ ընդունել սույն հայցը և դատական նիստի ընթացքում պարզել հայցի առարկան և հիմքը:

Այսպիսի իրավական դիրքորոշում է արտահայտել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը ՎԴ/2450/05/11 գործով 15.07.2011թ. «Բողոքը բավարարելու մասին» որոշման մեջ:

Վարչական վերաքննիչ դատարանը որոշման մեջ հղում է կատարել ՀՀ Սահմանադրության 18, 19-րդ, Կոնվենցիայի 6-րդ հոդվածներին, ՀՀ «Վարչական դատավարության» օրենսգրքի 6-րդ հոդվածին (գործի փաստերը վարչական դատարանը պարզում է ի պաշտոնե (“ex officio”)), 8, 86-րդ հոդվածներին և հանգել է եզրակացության, որ «եթե վեճը ծագել է հանրային իրավահարաբերություններից և այն վերապահված չէ նույն հոդվածի 2-րդ կետում նշված մարմինների քննությանը, ապա այդ գործը ենթակա է քննության ՀՀ Վարչական դատարանում»:

Կազմակերպությունը իրացնելով ՀՀ Դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով երաշխավորված իրավունքը՝ մատնանշում է վերոգրյալ դատական ակտում դատարանների կողմից օրենքներին տրված մեկնաբանությունները, քանի որ դրանք կիրառելի են սույն հայցի ընդունելիության հարցը լուծելիս:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ և 68-րդ հոդվածները՝

ԽՆԴՐՈՄ ԵՄ՝

ճանաչել ոչ իրավաչափ 2013 թ. փետրվարի 18-ի նախագահական ընտրությունների ժամանակ ՀՀ ոստիկանության գործողությունները (անգործությունը):

Կից ներկայացնում եմ՝

1. Կազմակերպության կանոնադրության և պետական ռեգիստրի վկայականի պատճենները
2. 2013թ. փետրվարի 18-ի կազմակերպության թիվ Ե/2013-18.02/98, Ե/2013-18.02/99, Ե/2013-18.02/101գրությունների և կից ներկայացված հաշվետվությունների պատճենները
3. http://www.police.am էլեկտրոնային կայքէջում 20.02.2013թ., 27.02.2013թ. հրապարակված հրապարակումների պատճենները
4. 2013թ. փետրվարի 19-ին ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Իջևանի բաժնից ստացված թվով 12 գրությունների պատճենները
5. 2013թ. փետրվարի 20-ին ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Գուգարքի բաժանից ստացված 3 գրությունների պատճենները
6. 2013թ. փետրվարի 20-ին ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձորի բաժնից ստացված 10 գրությունների պատճենները
7. Հայցադիմումը և կից փաստաթղթերը պատասխանողի և ֆինանսների նախարարության կողմից ստանալը հավաստող ապացույց
8. Պետական տուրք վճարելու մասին անդորրագիր:

Հարգանքներով
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ա. Զալյան
azalyan@hcav.am